

### **<<ՏՀՏ լիդերների հանդիպում>>-ֆորում**

Փետրվարի 26-28-ը Ադվերանի Արթուրս հանգստյան տանը <http://www.arthurs-hotels.ru/hotels/agveran/> տեղի կունենա <<ՏՀՏ լիդերների հանդիպում>>-ֆորումը: Այս անգամ ֆորումն ընդլայնել է իր շրջանակները և անդրադառնալու է ոչ միայն ՏՀՏ ոլորտում եղած խնդիրներին, այլև ՏՀՏ կիրառությանը տնտեսության այլ ոլորտներում: <<Այն ընկերությունները, որոնք ցանկանում են կիրառել համակարգչային միջոցներն իրենց բիզնեսում և բարձրացնել իրենց բիզնեսի արդյունավետությունը, ապա այս միջոցառումը նրանց համար է,- ասում է ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյան և ավելացնում,- բացի այդ, սա լավ հնարավորություն է համատեղել հանգիստն ընտանիքի հետ և գործնական հաղիպումները>>:

<<ՏՀՏ լիդերների հանդիպում>>-ֆորումի օրակարգում լինելու են հետևյալ թեմաները.

- ՏՀՏ գործիքները հաճախորդներին սպասարկելու համար
- ՏՀՏ կիրառումը ֆինանսաբանկային ոլորտում
- ՏՀՏ կիրառումը տուրիզմի, առևտրի և պահեստավորման ոլորտներում
- ՏՀՏ կիրառումը առողջապահական ոլորտում: Դեղագործության և հեռաբժշկության լուծումներ
- ՏՀՏ կիրառումը տրանսպորտային կազմակերպություններում

Ֆորումին ներկա կլինեն ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, հայաստանյան առաջատար բիզնես ընկերությունների, ՏՀՏ ընկերությունների, գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների շուրջ 100 ղեկավարներ և ներկայացուցիչներ:

Ֆորումի կազմակերպիչն է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը:

Կից ներկայացնում են <<ՏՀՏ լիդերների հանդիպում>>-ֆորումի օրակարգը:

ԻՏՁՄ մամուլի ծառայության պատասխանատու՝

Ռուզան Ապրեսյան

Հեռ.՝ 091-65-34-99, 010-54-88-81